ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 312-Ա
« 28 » ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 9-Ի ԹԻՎ 10-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 16-րդ հոդվածի 1-ին, 5-րդ և 6-րդ մասերով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1550-Լ որոշմամբ հաստատված թիվ 9 հավելվածի 19-րդ կետի 16-րդ ենթակետը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումն ըստ առանձին գործառույթների և բնագավառների բաշխելու և ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2021 թվականի հունիսի 9-ի թիվ 73-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի հունվարի 9-ի թիվ 10-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Signed by: ARSENYAN VAHAGN 2708930639

Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

ք. Եղեգնաձոր

Հավելված՝
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2025թ. հոկտեմբերի 28-ի
թիվ 312-Ա որոշման

«Հավելված՝
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2024թ. հունվարի 9 -ի
թիվ 10 -Ա որոշման

Մարզպետի տեղակալների և մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի միջև մարզպետի աշխատակազմի առանձին բնագավառների գործառույթներն ապահովող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաշխում

1. Մարզպետի տեղակալ Ա. Խաչատրյան

1) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչություն,

2) գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչություն,

3) զորահավաքային նախապատրաստության բաժին:

2. Մարզպետի տեղակալ Վ. Ասլանյան

1) կրթության, մշակույթի և սպորտի վարչություն,

2) քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչություն,

3) առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչություն,

4) զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժին:

5) Մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար

1) ֆինանսական վարչություն,

2) անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչություն,

3) իրավաբանական բաժին.»: